ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԹԱԴԵՈՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՋՄՐՈՒԽՏՅԱՆԻ
(1898—1972)



1972 թվականի սեպտեմբերի 17-ին Երևանում, 74 տարեկան հասակում, վախճանվեց ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցու տ. Թադեոս ավագ քահանա Ջմրուխտյանը:

Հանգուցյալը ծնվել է 1898 թվականին Թուրքիայի Բրուսայի շրջանում, գյուղացու ընտանիքում: Դեռևս պատանեկան շրջանից նա տարագրության ճանապարհի վրա 1915 թվականի Մեծ եղեռնին կորցնում է ծնողներին ու որբանում: Մահից հազիվ ազատված իր համագյուղացիների հետ հաստատվում է Բուլղարիա և ծառայության անցնում Սոֆիայի հայոց եկեղեցում որպես տիրացու և դպրապետ:

1929 թվականին նա ընտանիքով տեղափոխվում է Փարիզ, որտեղ մնում է մինչև 1936 թվականը և ապա բազմաթիվ հայրենադարձների հետ ներգաղթում Մայր Հայաստան և ընդմիշտ բնակություն հաստատում քաղաքամայր Երևանում:

Տ. Թադեոսը դեռ փոքր տարիքից ջերմ սեր է ունեցել դեպի եկեղեցին ու եկեղեցական երաժշտությունը: Նա օժտված էր նաև ձայնական բացառիկ շնորհքով ու մեծ ապրումով կատարում էր մանավանդ հոգևոր երգեր ու շարականներ:

Հանգուցյալը գիտակից նվիրումով իր կյանքն ու գործունեությունը կապում է եկեղեցական ծառայության հետ և 1957 թվականին Երևանի ս. Սարգիս եկեղեցում քահանա է ձեռնադրվում՝ իրականացնելով տարիների իր իղձն ու երազանքը:

1957 թվականից մինչև իր մահը տեր հայրը քահանայագործում է Երևանի ս. Սարգիս եկեղեցում և որպես հավատավոր, ժրաջան ու բարի հոգևորական սիրվում և գնահատվում է իր հավատավոր ժողովրդի կողմից:

Նրա բարեխիղճ և նվիրված հոգևոր գործունեությունը չի վրիպում նաև ազգիս Վեհափառ Հայրապետի բարձր ուշադրությունից: 1964 թվականին նրան շնորհվում է քահանայական լանջախաչ կրելու իրավունք, 1967 թվականին՝ ծաղկյա փիլոն, իսկ 1971 թվականին՝ ավագ քահանայության պատիվ:

Սեպտեմբերի 19-ին հանգուցյալ տ. Թադեոս քահանայի վերջին օծումն ու թաղման կարգը կատարվում է Երևանի ս. Սարգիս եկեղեցում՝ նախագահությամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի, մասնակցությամբ թեմի քահանայից ողջ դասի, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամների և հավատացյալների բազմության:

Հանգուցյալի կյանքի և եկեղեցական արդյունաշատ գործունեության մասին դամբանական է խոսում տ. Ռուբեն քհն. Մարտիրոսյանը՝ վեր հանելով տ. Թադեոս քահանայի ծառայության արժանիքները, որպես տիպար, հավատավոր ու հայրենասեր հոգևորականի, որը անսակարկ նվիրումով ու մեծ սիրով իր կյանքը նվիրել է իր եկեղեցու պայծառությանը և իր ժողովրդի հոգևոր սպասին:

Հանգի՛ստ տ. Թադեոս ավագ քահանայի ոսկորներին:

ԵՊՀ ԳՐԱԴԱՐԱՆ